ԿՐԹՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1

ՀՀ կրթության տեսչական մարմնի (ԿՏՄ) կառավարման խորհրդի նիստի

ք.Երևան **29 հունվարի 2021թ.**

Ժամը 10^{00}

ՀՀ կրթության տեսչական մարմնի կառավարման խորհրդի (այսուհետ՝ խորհուրդ) նիստին ներկա էին՝

Վ.Դումանյան	- ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար (խորհրդի նախագահ)
Ա.Ասոյան	- ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավար
Ք.Գրիգորյան	- ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ
Ս.Ալոյան	- «Դասարան» կրթական ծրագրի հիմնադիր նախագահ
Բ.Փափազյան	- «Թումո» ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնի փոխտնօրեն
Ա.Բախշյան	- «Հանրային դիվանագիտություն» հասարակական կազմակերպության նախագահի կրթության հարցերով խորհրդական
Ա.Գասպարյան	- «Դասավանդի՛ր, Հայաստան» կրթական հիմնադրամի հանրային համագործակցության ղեկավարի պաշտոնակատար

<u>Բացակայում էին՝</u>

Ա.Ավանեսյան	- ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ
Ա.Հայրապետյան	- ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ

<u>Մասնակցում էին՝</u>

Ալ.Շագաֆյան	- ՀՀ կրթության տեսչական մարմնի ղեկավար
Լ.Մաթևոսյան	- ՀՀ կրթության տեսչական մարմնի որակի ապահովման բաժնի պետ
Ա.Գևորգյան	- Խորհրդի քարտուղար
Ա.Հայրումյան	- Խորհրդի քարտուղարության անդամ

Հրավիրվածներ՝

Տ.Հակոբյան	- ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավարի տեղակալ
Ա.Ավետիսյան	- ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի զարգացման ծրագրերի վարչության խորհրդական
Ա.Հակոբյան	- ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի օգնական
Ռ.Գալստյան	- ՀՀ կրթության տեսչական մարմնի ղեկավարի տեղակալ
Զ.Միքայելյան	- ՀՀ կրթության տեսչական մարմնի ռիսկի գնահատման, ստուգումների պլանավորման, վերլուծությունների և գնահատման վարչության պետ

ՕՐԱԿԱՐԳ

Հարց 1. ՀՀ կրթության տեսչական մարմնի 2020 թվականի գործունեության տարեկան հաշվետվություն:

Հարց 2. Այլ հարցեր:

Նիստը վարում էր կառավարման խորհրդի նախագահ՝ **Վ.Դումանյանը:**

Նախագահողի առաջարկով խորհուրդը քվեարկությամբ՝ **7 կողմ ձայնով** միաձայն հաստատեց օրակարգը:

Օրակարգի առաջին հարցով Ալ.Շագաֆյանը ներկայացրեց ՀՀ կրթության տեսչական մարմնի 2020 թվականի գործունեության տարեկան հաշվետվությունը նշելով, որ ԿՏՄ գործունեության 2020 թվականի ծրագրի նպատակն էր **վերահսկողության արդյունավետության բարձրացման միջոցով նպաստել կրթության տեսչական մարմնի վերահսկողության ոլորտներում առավել որակյալ և արդյունավետ կրթություն ունենալուն՝ ըստ սահմանված ուղղությունների (խնդիրների):**

Առանձնահատուկ նշեց ստուգումների ընթացքում տրված գրավոր աշխատանքների արդյունքը.

«Հայոց լեզու» առարկայի թելադրությանը մասնակցած **1004** սովորողներից **«Անբավարար» են գնահատվել 355-ը (35%), «Բավարար»՝ 293-ը (29%), «Լավ»՝ 248-ը (25%), «Գերազանց»՝ 108-ը (11%):**

«Մաթեմատիկա» առարկայի գրավոր աշխատանքին մասնակցած **959** սովորողներից **«Անբավարար» են գնահատվել 454-ը (47%), «Բավարար»՝ 364-ը (38%), «Լավ»՝ 97-ը (10%), «Գերազանց»՝ 44-ը (5%):**

Ալ. Շագաֆյանը նշեց, որ ԿՏՄ-ն 2021 թվականը սահմանել է որպես անցումային և վերականգնողական գործառույթների տարի: ԿՏՄ գործունեության 2021 թվականի տարեկան ծրագրի նպատակ է սահմանվել՝ արդյունավետ վերահսկողության միջոցով հանրակրթության և նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ոլորտներում կրթության

կազմակերպման, ինչպես նաև ուսուցման և ուսումնառության վրա 2020 թվականի հասցրած անմիջական (կարճաժամկետ) վնասների վեր հանելը, դրանց հաղթահարման ուղիները նախանշելը:

Ս.Ալոյանը հետաքրքրվեց, թե արդյո՞ք նշված 1000 աշակերտները միայն Երևանից էին:

Ալ.Շագաֆյանը պատասխանեց, որ աշակերտները ներգրավված են Շիրակի, Արմավիրի մարզերից և Երևանից:

Ալ.Շագաֆյանը տեղեկացրեց, որ նախորդ տարի համավարակի պատճառով հնարավոր չի եղել իրականացնել դասալսումների գործընթացը, որը մեկնարկել էր 2020 թվականին **«Դասավանդի՛ր Հայաստան» (Teach for Armenia)** կազմակերպության հետ լրամշակված դասալսման գործիքակազմով, որի արդյունքում 2020 թվականի տարեկան ծրագրով և՛ դասալսումներ պետք է իրականացվեին, և՛ գրավոր աշխատանքներ անցկացվեին:

Ալ. Շագաֆյանը տեղեկացրեց նաև, որ ՀՀ-ում սահմանված արտակարգ դրությամբ պայմանավորված՝ 2020 թվականի II և III եռամսյակներում Երևան քաղաքի համայնքային և ոչ պետական, ՀՀ Լոռու մարզի Վանաձորի համայնքային մանկապարտեզներում կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) տարածման կանխարգելման նպատակով իրականացվել են **1086** մշտադիտարկումներ:

Ըստ մշտադիտարկումների ընթացքում հայտնաբերված խախտումների արդյունքում կազմված արձանագրությունների, ելնելով անվտանգության կանոնների խախտումները վերացնելու անհրաժեշտությունից՝ ՀՀ պարետին են ներկայացվել ընհանուր թվով 15 մանկապարտեզների գործունեության ժամանակավորապես կասեցումների վերաբերյալ առաջարկություններ: ՀՀ պարետի համապատասխան որոշումներով ժամանակավորապես կասեցվել է 15 մանկապարտեզների գործունեությունը (1-ից 7 օր տևողությամբ):

2020 թվականի III և IV եռամսյակներում ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի Երևան քաղաքի տարածքային կենտրոնի և ԿՏՄ աշխատակիցների կողմից համատեղ 186 և 96 ստուգայցեր են իրականացվել համապատասխանաբար Երևան քաղաքի 147 հանրակրթական և 90 նախադպրոցական ուսումնական հաստատություններում: 5 հաստատություններում արձանագրված խախտումները շտկելու վերաբերյալ տրվել են հանձնարարականներ:

Վ.Դումանյանը հետաքրքրվեց, թե արդյո՞ք հակահամաճարակային ստուգայցերը Կրթության տեսչական մարմնի պարտականությունների մեջ չեն մտնում:

Ալ.Շագաֆյանը պատասխանեց, որ հակահամաճարակային վերահսկողությունը Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի լիազորությունն է և Կրթության տեսչական մարմինն այդ աշխատանքներին մասնակցում է փոխօգնության կարգով՝ համապատասխան օրենսդրական հիմքով:

Ա.Ասոյանը արձագանքեց, նշելով որ այդ գործընթացը սկսվել է ՀՀ վարչապետի հանձնարարականով, և այդ գործընթացին մասնակցում են բոլոր տեսչական մարմինները, և որի արդյունքում իրականացվել է 81.000 ստուգայց, որից միայն երկուսն են բողոքարկվել:

Արդյունքում 5700 տնտեսավարող սուբյեկտների մոտ հայտնաբերվել են խախտումներ, մնացած դեպքերում խնդիրները տեղում շտկվել են:

Ալ. Շագաֆյանը շարունակելով խոսքը, նշեց, որ մինչ օրս կատարված 300 ստուգայցերում Կրթության տեչական մարմինը բացի խնդիրները տեղում շտկելուց, նաև իրականացրել է խորհրդատվական աշխատանքներ: Պատերազմի օրերին կրթության տեսչական մարմինը հյուրընկալել է Արցախի կրթության, գիտության և մշակույթի նախարարին, վերջինիս խնդրանքով պատերազմի օրերին Կրթութան տեսչական մարմնի տարածքում Արցախի ԿԳՄ նախարարի տեղակալի համար ապահովել է անհրաժեշտ աշխատանքային պայմաններ:

Վ.Դումանյանը առաջարկեց խորհրդի անդամներին ներկայացնել հարցեր և առաջարկություններ:

Ա. Բախշյանը հարցրեց թե ինչո՞ւ է տեսչական մարմինը նախընտրել մաթեմատիկան, այլ ոչ թե հայոց լեզուն, քանի որ հայոց լեզվի գիտելիքներն էլ լավ վիճակում չեն:

Ալ.Շագաֆյանը պատասխանեց, որ պատճառը Կրթության տեսչական մարմնի ռեսուրսների սղությունն է, և ստուգումների արդյունքից ելնելով՝ մաթեմատիկայի վիճակի կրկնակի վատ լինելը:

Ա. Բախշյանը ասաց, որ 2020 թվականի հաշվետվությունից հետո, նայելով 2021 թվականի աշխատանքային ծրագիրը չի տեսել գործիք վիճակը շտկելու համար: Ստուգաթերթերում իրականացվող փոփոխությունների արդյունավետությունը ի՞նչ երաշխիք կտա կրթության որակի բարելավման համար:

Ալ. Շագաֆյանը պատասխանեց, որ կրթական գործընթացի որակի գնահատումը այդ խնդրին ուղղված միջոցառում է: 2021 թվականի ծրագրով նախատեսված է համապատասխան գործիքակազմը լրամշակել՝ ավելացնելով հակահամաճարակային և աղետների ռիսկերին ուսումնական հաստատությունների դիմակայությանը վերաբերող հարցեր:

Ա.Բախշյանը հարցրեց, կրթության ոլորտի զարգացման համար ներգրավված այլ կազմակերպություններից ի՞նչպիսի համագործակցություն եք ակնկալում:

Ալ.Շագաֆյանը նշեց, որ Կրթության տեսչական մարմնի համար շատ կարևոր է թե՛ Գնահատման և թեստավորման կենտրոնի (ԳԹԿ) թե՛ նորաստեղծ Կրթության զարգացման և նորարարությունների ազգային կենտրոնի (ԿԶՆԱԿ) և թե՛ ոլորտում ներգրավված մյուս կառույցների հետ համագործակցությունը, և որպեսզի աշխատանքները ավելի սինխրոնացված լինեն՝ առաջարկեց ԿԳՄՍ նախարարի աջակցությունը՝ համագործակցության հարցում:

Վ.Դումանյանը խորհրդի անդամների համաձայնությամբ հանձնարարեց Կրթության տեսչական մարմնին՝ ներկայացնել առաջարկություն՝ մարզպետարանների և դրանց համապատասխան ստորաբաժանումների, ԳԹԿ-ի, ԿԶՆԱԿ-ի և այլ կազմակերպությունների/կառույցների հետ աշխատանքների սինխրոնացման և արդյունավետության բարձրացման վերաբերյալ:

Ս. Ալոյանը առաջարկեց բովանդակային ստուգումները սեգմենտավորված իրականացնել՝ հաշվի առնելով տեսչական մարմնի ռեսուրսների սղությունը: Օրինակ՝ ավագ դպրոցում կամ միջնակարգ դպրոցում որպեսզի համապետական պատկեր ստացվի, անհրաժեշտ է համատեղ

10 մարզում անցկացնել ստուգում/թեստավորում, քանի որ 3 մարզի պատկերը ամբողջական չէ: Հաշվի առնելով, որ հնարավորություն կա աշխատանքները համատեղել ԳԹԿ-ի հետ, նպատակահարմար կլինի դիտարկել հնարավորություն՝ տարին 2 անգամ իրականացնելու նմանատիպ ստուգում:

Ս. Ալոյանը ներկայացրեց Dasaran կրթական ծրագրի վիճակագրությունը, համաձայն որի այս պահի դրությամբ հանրակրթական համակարգում ներգրավված մանկավարժների 45%-ը 51 տարեկան և բարձր են, երիտասարդների թիվը վերջին 4 տարում 4%-ով նվազել է և այս պահի դրությամբ մինչև 30 տարեկան ուսուցիչները 9% են կազմում: Սա խոսում է այն մասին, որ հանրակրթական համակարգը ծերանում է, երիտասարդները չեն ցանկանում դպրոցում ուսուցիչ աշխատել, և որ այն հետագայում կբերի գլոբալ խնդրի:

Վ.Դումանյանը արձագանքեց, նշելով, որ ցավոք խնդիրը առկա է ոչ միայն հանրակրթական համակարգում, այլ նաև բուհերում: Սա խոսում է այն մասին, որ հասարակության մեջ ուսուցչի կարգավիճակը, դպրոցի, բուհերի և կրթության վիճակը այնպիսին չէ, որ շատերը ձգտեն և մրցակցային դաշտ ձևավորվի:

Ա.Գասպարյանն առաջարկեց՝ հնարավորության դեպքում իրականցվող տարբեր գործընթացներին ներգրավել նաև Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնին:

Ա.Ասոյանն առաջարկեց հաշվետվության մեջ ներկայացնել տեղեկություն կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) տարածման կանխարգելման հետևանքով հեռավար կրթության անցման հնարավոր ռիսկերի և ազդեցության վերաբերյալ:

Քննարկման արդյունքում հնչեցին նաև առանձին կարծիքներ և մեկնաբանությունները:

Ամփոփելով նիստը, Վ.Դումանյանն առաջարկեց քվեարկել՝ ՀՀ կրթության տեսչական մարմնի 2020 թվականի գործունեության հաշվետվության նախագիծին հավանություն տալու հարցը:

Խորհուրդը՝ 6 կողմ, 1 դեմ ձայների հարաբերակցությամբ հավանություն տվեց հաշվետվության նախագծին:

Հաշվետվության նախագծին խորհրդի անդամներից դեմ քվեարկեց Ա. Բախշյանը:

Խորհուրդը որոշեց՝

1" Հավանություն տալ ՀՀ կրթության տեսչական մարմնի 2020 թվականի գործունեության հաշվետվությանը:

2. Հանձնարարեց՝

2"1 Ներկայացնել առաջարկություն՝ մարզպետարանների և դրանց համապատասխան ստորաբաժանումների, ԳԹԿ-ի, ԿՀՆԱԿ-ի և այլ կազմակերպությունների/կառույցների հետ աշխատանքների սինխրոնացման և արդյունավետության բարձրացման վերաբերյալ:

2"2" Հաշվետվության մեջ կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) տարածման կանխարգելման հետևանքով հեռավար կրթության անցման հնարավոր ռիսկերի և ազդեցության վերաբերյալ հատվածը առավել մանրամասնել:

Կառավարման խորհրդի նախագահ՝ _____ **Վ. Դումանյան**

Ստորագրություն

Կառավարման խորհրդի քարտուղար՝ _____ **Ա. Գևորգյան**

Ստորագրություն